

«Հոգեբանությունը և կյանքը» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ-ի նիստի որոշման (արձ. N25)՝ դոկտորական և քեկնաժուական ատենախոսությունների համար

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

ПСИХОЛОГИЯ И ЖИЗНЬ
PSYCHOLOGY AND LIFE

1-2
2009



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	8
ՀԱՆԴԻՊՈՒԲ ՎԵՅՎՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀԵՏ	10

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ <i>ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՄԱՆՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱՐԱՐ ԸՆԴՊՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ</i>	13
---	----

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ <i>ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԵԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅ-ՈՒՄ</i>	19
ՆԱԻՐԱ ՀԱԿՈՔՅԱՆ, ՄԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ <i>ԱՋԱԿՑՈՂ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՐԵՅՆԻՆԳՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՏԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ</i>	28
ԼԻԴԱ ԱՐԱՄՅԱՆ <i>ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ</i>	33
ՍԱՐԻԵՏԱ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ <i>ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ</i>	39
ԼԻԼԻԹ ԼԱՉԻՆՅԱՆ <i>ԿԻՆ-ՏՂԱՍԱՐԴ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ</i>	46
ЛУСИНЕ ПЕТРОСЯН <i>ИЗУЧЕНИЕ СУЩНОСТИ "ИМИДЖА" И НЕКОТОРЫЕ ТЕХНОЛОГИИ ЕГО ФОРМИРОВАНИЯ</i>	50
ՎԱԼՅԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ <i>ՄԱՆԿԱՑԱՆ ՄԻՋՎԱՅՐԻՆ ՀԱՐՄԱՐԿԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</i>	57
ՍԻՐՎԱՐԴ ԲԵՋԻՐՅԱՆ <i>ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԵՏՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ</i>	62

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

АСЯ БЕРБЕРЯН <i>ЛИЧНОСТЬ: ПОТЕНЦИАЛ РАЗВИТИЯ И САМОАКТУАЛИЗАЦИИ В ЭКЗИСТЕНЦИАЛЬНО-ГУМАНИСТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ</i>	69
ԼԻԼԻԹ ԱԹԱՔԵԿՅԱՆ <i>ՖՐՈՒՄՏՐԱՅԻՌՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԱՆՁԻ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ</i>	76

ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՌԻԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ <i>ՄԱՅՐԻԿ, Ո՞Վ ԵՄ ԵՄ ԵՎ ՈՐՏԵ՞Ղ ԵՄ...</i>	81
--	----

Ը Ն Դ Յ Ա Ն Ո Ւ Ր

Հ Ո Պ Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դ Ա Վ Ի Թ Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Յ Ա Ն

**Բ Ա Ր Զ Ր Ա Գ Ո Ւ Յ Ն Ո Ա Ջ Մ Ա Կ Ա Ն
Ո Ւ Մ Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն
Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ո Ւ Ր Ս Ա Ն Տ Ն Ե Ր Ի Ս Տ Ե Դ Ծ Ա Ր Ա Ր
Ը Ն Դ Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
Ջ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն
Հ Ի Մ Ն Ա Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը**

Ժամանակակից հասարակությունում գլոբալ փոփոխությունները, ռազմածառայողական գործունեության բարդ և դինամիկ բնույթը առաջ են բերում ռազմական ոլորտի մասնագետների անձի ստեղծարարության բազմակողմանի զարգացման անհրաժեշտություն: Բարձրագույն ռազմական դպրոցի արդիականացման ժամանակակից փուլում հատուկ ուշադրություն է դարձվում կրթադաստիարակչական գործընթացի կատարելագործմանը, որում կուրսանտներն ընդգրկվում են ակտիվ ուսումնաճանաչողական գործունեության մեջ, ինչն էլ նպաստում է նրանց անձնային զարգացմանը և ինքնակրթությանը:

Այսօր էականորեն բարդանում են սպառազինությունը և ռազմական տեխնիկան, աճում է այն հնարների, գործողությունների թիվը, որոնց սպան պետք է կատարյալ տիրապետի առավել կարճ ժամանակահատվածում: Ստեղծարար ընդունակությունները այսօր դրսևորվում են առավելապես ինքնուրույն ընտրության, նորի բացահայտման, գիտելիքները այլ իրավիճակների փոխանցման, յուրահատուկ և ոչ ստանդարտ խնդիրների լուծման ժամանակ, ինչը հատկապես կարևոր է ռազմական գործունեության բոլոր ոլորտներում մտային աշխատանքի և ստեղծագործական որոշումների ընդունման հարաբերակցության աճի պայմաններում:

Այս պարագայում ռազմական բուհում ապագա սպաների ստեղծագործական ընդունակությունների զարգացումը կարևոր և արդիական հիմնախնդիրներից մեկն է դառնում:

Ռուս հեղինակների հետազոտություն-

ները վկայում են, որ կուրսամտների միայն 12%-ն է օժտված զարգացած ստեղծարար ընդունակություններով և կարողանում է լուծել բարձր բարդության ստեղծագործական խնդիրներ: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ ռազմական մասնագետների պատրաստումը հիմնականում ուղղված է առարկայական գիտելիքների յուրացմանը և ոչ թե նրանց մոտ ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

Մանկավարժական պրակտիկան ցույց է տալիս, որ վերոնշյալ թերությունների վերացումը հնարավոր է միայն ուսուցման ավանդական և իննովացիոն միջոցների մեթոդների համակարգի մոդելավորման միջոցով:

Սակայն մինչ առաջարկվող համակարգի առանձնահատկություններին և ակնկալվող արդյունքներին անդրադառնալը անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ստեղծարարության հոգեբանական ուսումնասիրությունների հիմնական ձեռքբերումները, որոնք թույլ են տալիս բարձրագույն կրթության ոլորտում ստեղծարարության ձևավորումը դիտարկել որպես կարևորագույն և առանցքային գործոն:

Եթե փորձենք պայմանականորեն խմբավորել, ապա բոլոր առաջացած տեսություններում քննարկվում են չորս հիմնական ասպեկտներ՝ ստեղծարար գործընթացը, ստեղծարար արդյունքը, ստեղծողի անձը և ստեղծարար միջավայրը: Հաճախ այս մոտեցումները օգտագործվում են միասին [11]:

Խորհրդային հոգեբան Յա. Ա. Պոնոմարյովը դիտարկել է ստեղծարար գործունեությունը՝ որպես զարգացման տանող փոխներգործություն, և ինչպես ավելացրել է Լ. Ա. Վիգոտսկին, այն ուղղորդում է մարդուն դեպի ապագա, և դրանով իսկ կարելի է այն համարել մարդու կենսագործունեության անհրաժեշտ պայման [7]:

Յա. Ա. Պոնոմարյովը նշում է, որ բախվելով խնդրային իրավիճակին՝ մարդը նախ օգտագործում է լուծման պատրաս-

տի, տրամաբանական միջոցները, իսկ եթե խնդիրը ստեղծարար մոտեցում է պահանջում, և այդ մեթոդները չեն բավարարում, ապա անձը դիմում է ենթագիտակցական, ինտուիտիվ կառուցվածքներին:

Դպրոցում մենք սովորում ենք մտածել տաքսոնոմիկ կատեգորիաներով. դա արդեն մտածողական ընդունակությունների վերլուծական ասպեկտն է, բայց մեծամասնությամբ այս միջոցի կիրառումը սահմանափակվում է արհեստական իրավիճակներով: Եվ երբ ուսանողները կամ ասպիրանտները անհրաժեշտություն են գզում գործելու ոչ այնպես, ինչպես դպրոցում են սովորեցրել՝ ծնել սեփական մտքերը, այլ ոչ թե վերլուծել և կրկնել ուրիշներինը, նրանց մոտ բարդություններ են առաջանում: Պատկերավոր ասած՝ ինտելեկտուալ կոնֆորմիզմի գործընթացը և ստեղծարարության ծնշումը սկսվում են այն պահից, երբ երեխաներին ստիպում են գրել լուսանցքը պահպանելով և խրախուսում են դա ճիշտ անողներին:

Ստեղծարարության զարգացումը նախ և առաջ ներքին հոգեբանական և արտաքին արգելքների հաղթահարումն է: Առավել արդյունավետ է քննարկել ստեղծարարության ճանապարհին հանդիպող արգելքները՝ դրանք ճանաչելու և ավելի հեշտ հաղթահարելու նպատակով:

Նախ և առաջ դա անվստահությունն է սեփական ուժերի նկատմամբ: Սակայն ինքնավստահությունն էլ չպետք է վերածվի սեփական անսխալականության հանգմանը, քանի որ դա առավել հաճախ հանդիպող արգելքներից է: Ինչպես նշել է Լուի Պաստերը. «Նրանք քեզ կսովորեցնեն փորձել ապացուցել, որ դու ճիշտ ես, ես քեզ եմ ասում՝ ապացուցի՛ր, որ դու սխալվում ես» [10, 230]:

Հանդիպում են այնպիսի արգելքներ, ինչպիսիք են՝ ցանկալին որպես իրական ընդունելը, հոգեբանական ռեակտիվությունը, անաչառությունը, հուզական լարվածությունը, հետևանքների գերազնահա-

տունը [4,9]: Խանգարող հանգամանքներից է նաև ֆունկցիոնալ ֆիկսացիան, երբ լուծման համար անհրաժեշտ միջոցը չի օգտագործվում ամենաարդյունավետ ձևով: Մենք առօրյա կյանքում սովոր ենք իրերը օգտագործելու միայն մեկ նպատակի համար, սակայն փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր լուծում կարող է արդյունավետ կիրառվել տարբեր իրավիճակներում:

Ստեղծարարության զարգացումը առավել կարևորելով հատկապես կրթական, մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գործընթացներում՝ Ջորդան Այանը առաջարկում է ստեղծարարության զարգացման 10 ստրատեգիաներ: Հիմնական նպատակն է սովորեցնել անձին օգտագործել «4 գունարեկիների» հավաքը՝ պլանավորում, հաստատակամություն, համբերություն, կիրք [3]:

Գործունյա ստեղծարար անձի ձևավորումը մեծ չափով կապվում է իմացական ակտիվության զարգացման հետ: Սրանց հիմք են ծառայում իմացական հետաքրքրությունները, որոնք նպաստում են մտավոր գործունեության առավել կենտրոնացմանը: Իմացական ակտիվությունը հիմնվում է ինչպես բնածին նախադրյալների, այնպես էլ անձնային որակների վրա:

«Միշտ պահպանելով կասկածի վիճակը՝ ներմուծել սիստեմատիկ և դանդաղ հետազոտություն. սա է էականը»,— նշում է մտածողության դասավանդման դասական Ջոն Դյուին: Նա կարևորում է նաև գիտելիքի կազմակերպվածությունը և ակտիվ պատկերի ներշնչման նշանակությունը: Վերջինիս շեշտադրմանը հանդիպում ենք նաև Օ. Կ. Տիխոմիրովի հետազոտություններում [8]:

Որո՞նք են ստեղծարարության գիտական հոգեբանական ուսումնասիրությունների հիմնական ընդհանրացումները.

ա) Ստեղծարարությունը նոր մոտեցումների և արդյունքների անհրաժեշտու-

թյանը ադապտիվ ազդեցության ընդունակությունն է: Այս ընդունակությունը թույլ է տալիս նաև գիտակցել նորը կենցաղում, չնայած որ ինքնին գործընթացը կարող է կրել ինչպես գիտակցված, այնպես էլ անգիտակցական բնույթ [12].

բ) Նոր ստեղծարար արդյունքը առավելապես կախված է ստեղծողի անձից, նրա ներքին դրդապատճառայնության ուժից: Սակայն կարծիքներն այն մասին, թե ինչ ազդեցություն են թողնում անձնային առանձնահատկությունները ստեղծարարության վրա, խիստ տարբերվում են: Կարևորվում են տարբեր անձնային որակներ, սակայն այս ուղղությամբ փորձարարական տվյալները համարյա բացակայում են [1, 2].

գ) Ստեղծարար գործընթացի, արդյունքի և անձի առանձնահատկություններն են յուրահատկությունը, կայունությունը, վալիդությունը, աղեկվատությունը և պիտանելիությունը [5,6].

դ) Ստեղծարար արդյունքները կարող են իրենց բնույթով շատ տարբեր լինել՝ մաթեմատիկական նոր խնդրի լուծում, նկարներ կամ պոեմներ, սոցիալական և կենսական խնդիրների նոր լուծումներ, նոր տեսություններ և այլն... [3,10]: Խոսքն այն մասին է, որ ստեղծարար աշխատանքը նորի ստեղծման գործընթացն է ցանկացած ոլորտում, քանի որ ստեղծարար է լինում ինքնին արարման գործընթացը, որը տալիս է արդյունավետ լուծումներ, և արդյունքները կարող են օգտագործվել ամենատարբեր ոլորտներում:

Ինչպիսի՞ քայլեր և արդյունքներ է ենթադրում ստեղծարար ընդունակությունների համակարգային զարգացումը ռազմական բուհում.

1. Կուրսանտների ստեղծարար ընդունակությունների զարգացումը իրենից ներկայացնում է դասախոս և սովորող սուբյեկտ-սուբյեկտային նպատակաուղղված և անձնային ուղղորդված փոխազդեցություն, որի ընթացքում դասավանդողը,

օգտագործելով խնդրային առաջադրանքների տարբեր ձևեր, հասնում է անձնային «ակմե»-ի ձեռքբերման՝ պահպանելով օրվա հստակ օրակարգը:

2. Ստեղծարար ընդունակությունների զարգացումը կուրսանտների մոտ գնահատվում է ըստ հետևյալ չափանիշների.

• **Մասնագիտական գործունեությանը դրդապատճառաարժեքային վերաբերմունք:** Այս խմբի չափանիշներին են վերաբերում ուսուցանման գործընթացին դրդապատճառաարժեքային վերաբերմունքը, ձգտումը լուծելու տարբեր բարդության խնդիրներ, ձգտումը աշխատելու խմբերում, հետաքրքրվածությունը մասնագիտական աճում:

• **Ինտելեկտուալ-ստեղծագործական ունակություններ:** Այս խմբում ընդգրկված են այնպիսի ունակություններ, ինչպիսիք են՝ տարբեր աղբյուրներից ուսումնական տեղեկատվության որոնումը, ոչ ստանդարտ որոշումների ընդունումը, նոր պայմաններում արագ կողմնորոշվելը, առկա գաղափարների ստեղծագործաբար մշակելը:

• **Սեփական գործունեության ռեֆլեքսիա:** Ռեֆլեքսիվ բաղադրիչը արտահայտվում է ինֆորմացիայի վերամշակման ունակության (զլխավորի առանձնացում, խնդրի որոշարկում, փաստերի և երևույթների միջև կապերի փոխհարաբերության հայտնաբերում), ուսումնական խնդիրների կատարման ունակության (վերարտադրողական խնդիրներ՝ մասամբ որոնողական) և մտածողության քննադատականության մեջ:

3. Ստեղծարար ընդունակությունների զարգացմանն ուղղված ուսուցանման տեխնոլոգիան առավել նպատակահարմար է դիտարկել որպես ոչ միայն դիդակտիկ և ստեղծագործական խնդիրների միջոցով համապատասխան գործընթացների ակտիվացում, այլև կուրսանտի անձի ամբողջական զարգացում: Ծրագիրը պարունակում է հաղորդակցական և խնդրա-

յին ուսուցանման տարրեր, ընդգրկում է որոնողական մեթոդներ, որոնց օգնությամբ սովորողները անցկացնում են խնդրի ինքնուրույն հետազոտում՝ ձևավորելով ձեռքբերումների ներքին դրդապատճառայնություն:

Ամփոփելով նշենք, որ ստեղծագործական ընդունակությունների արդյունավետությունը պայմանավորվում է հետևյալ հոգեբանամանկավարժական գործոնների համադրությամբ.

• ուսումնական առարկայի հստակ «նպատակաուղղվածությամբ», նրա «համակարգաբովանդակային» կառույցի ապահովմամբ,

• անձի դրդապատճառային կառուցվածքում ակտիվ ճանաչողական հետաքրքրության գերակայությամբ,

• «ակմե»-ի ձեռքբերման ներքին դրդապատճառայնության ձևավորմամբ,

• կուրսանտի միջանձնային հաղորդակցական ոլորտի զարգացմամբ,

• որոշումների ընդունման գործընթացում ինքնուրույնության, ռիսկայնության և մտածողության քննադատականության արդյունավետ համադրությամբ:

Ստեղծագործական ուսուցման ոլորտի տեսական վերլուծության մակարդակում մեր կողմից առանձնացված և հատուկ կարևորված առանձնահատկությունների այս համակազմը որպես այդպիսին գործնականում դեռևս չի կիրառվել: Տարբեր հեղինակների կողմից մշակվել և կիրառվել են վերոհիշյալ համակարգի միայն առանձին մասերը: Մեր կարծիքով՝ ուսուցման և զարգացման վերոհիշյալ համակարգը պատրաստ է արդյունավետությամբ կիրառվելու ռազմական բուհերում, որի իրականացումն էլ առաջիկայում հնարավորություն կընձեռի մեզ առավել մանրամասն քննարկելու և վերլուծելու ծրագրի կիրառման գործնական արդյունքները: Վերջինս թույլ կտա նաև հետազոտական մակարդակում հավաստել առաջ քաշված դրույթները և ռազմական բուհերի ուսում-

նական ծրագրերում ներառել ստեղծարարության զարգացման առավել երկարաժամկետ ուսումնական-զարգացնող համապատասխան ծրագիր:

Ըստ էության ստեղծարարությունը չի ժառանգվում, այլ ընդհանուր օժտվածության հիման վրա, միկրոմիջավայրի ազդեցության ներքո, ստեղծվում է դրդապատճառային և անձնային առանձնահատկու-

թյունների համակարգ, և ընդհանուր օժտվածությունը վեր է ածվում ստեղծարարության: Ահա այս խնդիրներին պետք է ուշադրություն դարձնի համալսարանը՝ ինքնուրույն մտածելու և գործելու ընդունակությամբ մասնագետներ ձևավորելու համար: Անհրաժեշտ է միայն հիշել՝ բարձրորակ մասնագետ լինելու համար հարկ է լուծել որքան կարելի է շատ խնդիրներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ա. Հ., Ստեղծագործական մտածողություն. անձնավորություն, Երևան, Հայաստան, 1987, 227 էջ:
2. Շաքարյան Հր. Գ., Անձնայինը և վերանձնայինը ստեղծագործականում, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, Եր. համալս. հրատ., №1, 2000, էջ 26–35:
3. Айян Дж., Эврика — 10 способов освободить ваш творческий гений, СПб, “Питер”, 1997, 352 с.
4. Богоявленская Д. Б., Интеллектуальная активность как проблема творчества, Ростов—на—Дону, Изд—во “Рост”, Ун—та, 1983, 173 с.
5. Боно Э. Де., Латеральное мышление, Минск, “Попурри”, 2005, 384 с.
6. Вуджек Т., Тренировка ума, СПб, “Питер”, 1996, 288 с.
7. Гальперин П. Я., Данилова В. Л., Воспитание систематического мышления в процессе решения малых творческих задач, Вопросы психологии, 1980, №1 с. 31–38.
8. Дьюи Д., Психология и педагогика мышления, Москва, “Лабиринт”, 1999, 192 с.
9. Столяров А. М., Эвристические приемы и методы активизации творческого мышления, Москва, “ВНИИПИ”, 1988, 126 с.
10. Халперн Д., Психология критического мышления, СПб, “Питер”, 2000, 512 с.
11. Rouquette M—L., La creativite. Paris, Presses Universitaires de France, 1995.
12. http://www.voppsy.ru/journals_all/issues/1998/984/984123.htm, Торшина К. А., Современные исследования проблемы креативности в зарубежной психологии.

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ КРЕАТИВНЫХ СПОСОБНОСТЕЙ У КУРСАНТОВ ВЫСШЕГО ВОЕННОГО УЧЕБНОГО ЗАВЕДЕНИЯ

Д. АЙРАПЕТЯН

В статье обсуждаются основные проблемы развития креативных способностей у курсантов высших военных учебных заведений. Особое значение придается развитию креативного подхода у будущих военных специалистов и указываются ее основы. Анализируются те препятствия, которые встречаются на пути развития креативных способностей и предлагаются пути их преодоления. Особо рассматриваются критерии и психолого–педагогические условия развития креативных способностей у курсантов высших военных учебных заведений.

MAIN PROBLEMS OF DEVELOPMENT OF CADETS' CREATIVE ABILITIES AT MILITARY EDUCATIONAL INSTITUTION

D. HAYRAPETYAN

The main problems of the development of cadets' creative abilities in educational institutions are discussed. It is mentioned the importance of the development of creative approaches for the military professionals and are also given its fundamentals.

In the paper we discussed all those obstacles, which arise during the development of creative abilities and suggested solutions for these problems. Special attention is paid to development criteria of creative abilities in military educational institutions and to psycho–pedagogic conditions for creative abilities development.